DOI: 10.59560/18291155-2025.1-112

ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ
Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի ինստիտուտ,
իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի
ամբիոնի դասախոս,
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի իրավական
ապահովման բաժնի պետ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել, քննարկել և ներկայացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարման համակարգում Ազգային անվտանգության խորհրդի ստեղծման պատմական էվոլյուցիան, «The National Security Act»-ի ընդունման իրավաքաղաքական նպատակները, հետևանքները: Սույն հոդվածում օգտագործվում են հետազոտության համեմատական, վերլուծության և սինթեզի մեթոդները: Հետազոտության առարկան Միացյալ Նահանգների Ազգային անվտանգության խորհրդի ստեղծումն ու պետական կառավարման համակարգում վերջինիս տեղն ու դերն է:

Հիմնաբառեր. ազգային անվտանգություն, Ազգային անվտանգության ռազմավարություն, Ազգային անվտանգության խորհուրդ, Միացյալ Նահանգներ, Թեոդոր Ռուզվելտ, Հարի Թրումեն:

«Ազգային անվտանգություն» եզրույթը պաշտոնական շրջանառության մեջ է դրվել նախորդ դարում. **1901 թվականին** Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ **ԱՄՆ կամ Միացյալ Նահանգներ, Հ.Ս.**) նախագահ Թեոդոր Ռուզվելտն իր ուղերձում հայտարարեց, որ *ազգային անվտանգության շահը պահանջում է Պանամայի ջրանցքի անեքսիան: Չնայած*

Պանամայի ջրանցքը գտնվում էր այլ ***<u>ինքնիշխան</u>*** *պետության տարածքում, սակայն* ***կառուցված էր ամերիկյան հարկատուների միջոցներով***[1]**:**

Ուղերձից անմիջապես հետո *«ազգային անվտանգություն»* եզրույթը մտավ պարբերական տպագրություն և քայլ առ քայլ սկսվեց գործածվել թե՛ գիտական, թե՛ քաղաքական բնագավառներում: Ելույթից շուրջ 40 տարի անց՝ 1947 թվականին, ԱՄՆ-ում ընդունվեց «Ազգային անվտանգության» մասին օրենքը՝ «**National security act**» **(«Ազգային անվտանգության ակտը»,** այսուհետ *նաև՝* ***Ակտ***)[2]**:**

Մինչ Ակտի բովանդակությանն ու նշանակությանն անդրադառնալը հարկ է արձանագրել, որ **«ազգային անվտանգություն»** եզրույթն առաջին անգամ սահմանել է ամերիկացի լրագրող, քաղաքական մեկնաբան Վոլթեր Լիփմանը (Walter Lippmann)՝ «**U.S. Foreign Policy: Shield of the Republic**» **(ԱՄՆ արտաքին քաղաքականությունը՝ Հանրապետության վահանը)** աշխատությունում: Այսպես. «Ազգը գտնվում է անվտանգության *վիճակում (վիճակում, Հ.Ս.),* երբ այն ստիպված չէ պատերազմից խուսափելու համար զիջել իր օրինական շահերը և ըստ անհրաժեշտության կարող է պատերազմի միջոցով դրանք պաշտպանել»[3]:

Ըստ առաջին սահմանման՝ ազգային անվտանգությունը ներկայացվում է որպես մի վիճակ, երբ ազգը՝ որպես հավաքական միավոր, ոչ միայն չի վախենում պատերազմից, այլ նաև պատրաստ ու կարող է, հանուն իր կենսական շահերի սպասարկման, պատերազմ վարել: Այս պարագային մենք գործ ունենք ազգային անվտանգության ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական ասպեկտի հետ:

Երբ առաջին անգամ սահմանվում էր ազգային անվտանգություն եզրույթը, վերջինս ներկայացվում էր պետության և իրավունքի տեսությունից մեզ հայտնի ազգային անվտանգության ընկալման **նեղ իմաստով՝** որպես զինված ուժերի կարողունակություն: Չքննարկելով այն հանգամանքը՝ արդյո՞ք ճիշտ է, թե՞ ոչ, որ այն ներկայացվել է որպես զինված ուժերի կարողունակության չափանիշ, արձանագրենք, որ հիշյալ սահմանումը հավաքական առումով լուրջ քննադատության չի արժանացել:

Մինչ Ազգային անվտանգության խորհրդի ստեղծմանն անդրադառնալը՝ հարկ ենք համարում արձանագրել, որ նմանատիպ կառույց կամ վերջինիս նախատիպ կոչվածն, այնուամենայնիվ, Միացյալ Նահանգներում գործել է: Այսպես, «Միացյալ Նահանգներում հատուկ ռազմական կաբինետի վերաբերյալ, որը սովորաբար Ազգային պաշտպանության խորհուրդ էր

[1] Основы национальной безопасности. Учеб. пособие для студ. высш. проф. учеб. заведений / **[Л.А. Михайлов]**, - М., Издательский центр “Академия”, 2008. – С. 45.

[2] https://govtrackus.s3.amazonaws.com/legislink/pdf/stat/61/STATUTE-61-Pg495. pdf [1/8/2025]

[3] **Walter Lippmann.** US Foreign Policy: Shield of the Republic. An Atlantic monthly press book. Boston: Little, Brown and Compony, 1943, pp. 51–177.

կոչվում, տարբեր առաջարկությունների ենք հանդիպում դեռևս 1911 թվականից: 1916 թվականի Ազգային պաշտպանության ակտով ստեղծվեց համանուն մի կառույց, որը գլխավորում էր Պատերազմի քարտուղարը: Սակայն այդ օրենքը նախնական առաջարկների համեմատ այնքան փոփոխվեց, որ գրեթե չի օգտագործվել, բացառությամբ ավելի ուշ՝ 1940 թվականին Ռուզվելտի կողմից ստեղծված Ազգային պաշտպանության խորհրդատվական խորհրդի (անգլ.՝ NDAC, The Council of National Defence) և դրա ստորաբաժանումների»[1]:

«Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ) ստեղծվել է ոչ թե ինքնուրույն, այլ որպես ամբողջական վերակազմավորման մաս, որը վերաբերում էր ամբողջ ազգային անվտանգության համակարգին՝ թե՛ քաղաքացիական, թե՛ ռազմական, ներառյալ՝ հետախուզական գործողությունները, և իրականացվել էր 1947 թվականի Ազգային անվտանգության ակտով: Հետևաբար, դժվար է տարանջատել ԱԱԽ-ի ստեղծումն ավելի լայն վերակազմավորումից, հատկապես հաշվի առնելով, որ ԱԱԽ-ի ստեղծումը շատ ավելի քիչ վիճահարույց էր, քան զինված ուժերի միավորումը, և դրա վրա ավելի քիչ ուշադրություն էր սևեռվում»[2]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից և Սառը պատերազմի սկզբից հետո հարափոփոխ աշխարհին ուղղված յուրահատուկ պատասխան էր ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի (այսուհետ՝ **ԱՄՆ ԱԱԽ**) ստեղծումը, որն իր բնույթով եզակի էր: Ստեղծված պետական նոր ինստիտուտին Ակտով վերապահվեց ազգային անվտանգության բնագավառը համակարգելու և այս բնագավառում քաղաքականությունն ուսումնասիրելու և մշակելու լիազորություններ ու գործիքակազմ:

ԱՄՆ ԱԱԽ-ն իր «տանիքի» տակ սկսեց հավաքագրել անվտանգության և արտաքին քաղաքականության բնագավառներում հայտնի փորձագետների: Իր գործունեության սկզբնական շրջանում ԱՄՆ ԱԱԽ-ն գործում էր որպես Հանրապետության Նախագահի խորհրդականների խորհուրդ՝ խորհրդատվություն և տեղեկատվություն տրամադրելով ազգային անվտանգության վերաբերյալ: Ժամանակի ընթացքում ԱԱԽ-ի տեղն ու դերը պետական ապարատում դարձավ ավելի ֆորմալ, իսկ լիազորությունները՝ առավել ընդգրկուն:

Ակտի ընդունումն ամբողջությամբ ձևափոխեց և վերակառուցեց ԱՄՆ ռազմական, արտաքին քաղաքականության և հետախուզական գործակալությունները՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ ծառայությունները կարգավորելու և ավելի հստակեցնելու նպատակով: Համաձայն Ակտի՝ Բանակի դեպարտամենտը միավորվեց ռազմածովային դեպար-

[1] **Paul Y. Hammond**. American Political Science Review. Volume 54, Issue 4, December, 1960, pp. 899–910.

[2] https://crsreports.congress.gov/product/pdf/R/R44828 [1/8/2025].

տամենտի հետ՝ դառնալով Պաշտպանության քարտուղարություն **(Department of Defense[1]),** որը գլխավորեց Պաշտպանության քարտուղարը: Ակտը, ի թիվս այլնի, նախատեսում էր ստեղծել առանձին ռազմաօդային ուժեր, ինչպես նաև վերջինիս առանձնացումը ռազմաօդային ուժերի ակադեմիայից:

Ի սկզբանե այս երեք գերատեսչություններից յուրաքանչյուրն իր նախարարով քվազի-նախարարության կարգավիճակ ուներ, սակայն Ակտում կատարված փոփոխություններից հետո՝ 1949 թվականից սկսած, վերջիններս ներառվեցին Պաշտպանության քարտուղարության ենթակայության ներքո: Հարկ է նաև նշել, որ մինչև 1949 թվականը Պաշտպանության քարտուղարությունը կոչվում էր «Ազգային ռազմական հաստատություն» (անգլ.՝ **National Military Establishment, NME**): Քանի որ վերջինս ուներ չափազանց «տհաճ» հապավում՝ **NME (էնըմի)**, որն արտասանությամբ նման է անգլերեն թշնամի՝ **Enemy** բառին, որոշվեց այն վերանվանել:

Ռազմական վերակազմավորման արդյունքում օրենքով ստեղծվեց Ազգային անվտանգության խորհուրդ (անգլ.՝ **National Security Council, NSC[2]**)՝ Միացյալ Նահանգների Նախագահի խորհրդականների յուրօրինակ ու յուրահատուկ մի կոմիտե, որը կոչված է զբաղվելու ազգային անվտանգությանը վերաբերող ներքին, արտաքին և ռազմական քաղաքականության մշակման և իրացման հարցերով:

Սառը պատերազմի տարիներին «Ազգային անվտանգության» մասին օրենքը, **Մարշալի պլանը**[3] և **Թրումենի դոկտրինը**[4], որպես մեկ ամբողջություն, կազմում էին Նախագահ Թրումենի վարչակազմի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ընդհանուր ռազմավարության հիմնական բաղադրիչներից մեկը:

Այսպես, ըստ 1947 թվականին ընդունված Ակտի՝ «ԱՄՆ ԱԱԽ-ն կազմված էր Նախագահից, Պետքարտուղարից, Պաշտպանության քարտուղարից, Բանակի քարտուղարից, Նավատորմի քարտուղարից, Ռազմաօդային ուժերի քարտուղարից, Ազգային անվտանգության ռեսուրսների խորհրդի նախագահից և այն պաշտոնյաներից, որոնց Նախագահը կարող էր ժամանակ առ ժամանակ նշանակել որպես ԱՄՆ ԱԱԽ անդամ, գործադիր իշխանության դեպարտամենտների այլ քարտուղարներ, Ռազմամթերքի խորհրդի նախագահ և Հետազոտությունների ու զարգացման խորհրդի նախագահ»[5]:

[1] https://www.defense.gov [1/8/2025]

[2] https://www.whitehouse.gov/nsc/ [1/8/2025]

[3] https://history.state.gov/milestones/1945-1952/marshall-plan [1/8/2025]

[4] https://history.state.gov/milestones/1945-1952/truman-doctrine#:~:text=With%20the%20Truman%20Doctrine%2C%20President,external%20or%20internal%20authoritarian%20forces. [1/8/2025]

[5] https://crsreports.congress.gov/product/pdf/R/R44828 [1/8/2025]

Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, ԱՄՆ ԱԱԽ մշտական կազմը ենթարկվեց որոշակի փոփոխությունների, ըստ որոնց հստակ սահմանվեց, թե պետական բարձրագույն պաշտոնյաներից որոնք պետք է համարվեն ԱՄՆ ԱԱԽ մշտական անդամ, ինչպես նաև՝ որ պաշտոնյան, ինչ կարգավիճակում պետք է ծառայություն իրականացնի: Այսպես, *«ԱՄՆ ԱԱԽ մշտական անդամներն են՝ Նախագահը, Փոխնախագահը, Պետական քարտուղարը, Գանձապետարանի, Պաշտպանության և Էներգետիկայի քարտուղարները: ԱՄՆ ԱԱԽ մշտական անդամներ են նաև՝ Հանրապետության գլխավոր դատախազը, Ներքին անվտանգության քարտուղարը, ՄԱԿ-ում Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչը, Նախագահի օգնականն ու աշխատակազմի ղեկավարը (Նախագահի աշխատակազմի ղեկավար), Նախագահի Ազգային անվտանգության հարցերով օգնականը (Ազգային անվտանգության խորհրդական), Գիտության և տեխնոլոգիաների քաղաքականության գրասենյակի նախագահը և տնօրենի օգնականը, ինչպես նաև Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ադմինիստրատորը (Administrator of the United States Agency for International Development*[1]*):*

Այդտեղ սահմանված կարգով՝ Ազգային հետախուզության տնօրենը, Միացյալ շտաբի պետերի նախագահը (Joint Chiefs of Staff[2]*), ինչպես նաև Կենտրոնական հետախուզական վարչության տնօրենն ԱՄՆ ԱԱԽ նիստերին մասնակցում են, սակայն արդեն խորհրդատվական կարգավիճակով:*

Հանրապետության Նախագահի խորհրդականը, խորհրդականի տեղակալը և ԱԱԽ իրավախորհրդատուն հրավիրվում են մասնակցելու ԱԱԽ յուրաքանչյուր նիստին: Նախագահի օգնականը և ազգային անվտանգության հարցերով խորհրդականի տեղակալը (ազգային անվտանգության հարցերով խորհրդականի գլխավոր տեղակալը) պետք է մասնակցեն ԱԱԽ յուրաքանչյուր նիստին և ծառայեն որպես քարտուղար»[3]*:*

Միացյալ Նահանգների Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ բաժնի (**Article II, Section 2**) 1-ին նախադասությունն ամրագրում է հետևյալը.

*«Նախագահը հանդիսանում է Միացյալ Նահանգների Բանակի և Նավատորմի Գլխավոր Հրամանատարը (**Commander-in-Chief, Հ.U.**) (…)»*[4]*:*

Ըստ Ակտի՝ ԱՄՆ ԱԱԽ-ն կազմված է բացառապես գործադիր իշխանության ներկայացուցիչներից, հիմնականում՝ իրավապահ, արտաքին ու ներքին հետախուզությամբ զբաղվող պետական կառույցների, ինչպես նաև

[1] https://www.usaid.gov/organization/office-administrator [1/8/2025]

[2] https://www.jcs.mil [1/8/2025]

[3] https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/02/04/memorandum-renewing-the-national-security-council-system/ [1/8/2025]

[4] https://www.senate.gov/about/origins-foundations/senate-and-constitution/constitution.htm#a1_sec1 [1/8/2025]

դիվանագիտական կորպուսի ղեկավարից, ասել կուզենք՝ արտաքին հարաբերությունների և անվտանգության պատասխանատուներից:

ԱՄՆ ԱԱԽ-ն, ստեղծվելով Նախագահ Թրումենի վարչակազմի կողմից, նպատակ ուներ ճգնաժամային և բարդ իրավիճակներում օգնել Հանրապետության Նախագահին՝ համակարգելու Գործադիր իշխանության մարմինների աշխատանքները անվտանգության և արտաքին հարաբերությունների բնագավառներում:

«Ազգային անվտանգության ակտի» 101-րդ հոդվածի (a) մասում **(Section 101 (a))** ամրագրված դրույթը մեզ թույլ է տալիս պնդել, որ ԱՄՆ ԱԱԽ-ն՝ Հանրապետության Նախագահի վարչակազմում հիմնադրված խորհրդակցական մարմին է:

«Խորհրդի գործառույթն ազգային անվտանգությանը վերաբերող ներքին, արտաքին և ռազմական քաղաքականության ինտեգրման վերաբերյալ Նախագահին խորհուրդ տալն է, որպեսզի ռազմական ծառայություններին և կառավարության մյուս գերատեսչություններին հնարավորություն ընձեռվի ավելի արդյունավետ համագործակցել ազգային անվտանգությանը վերաբերող հարցում»[1]*:*

Շարունակելով Ակտի ուսումնասիրությունը՝ կբացահայտենք Ազգային անվտանգության խորհրդի հավելյալ լիազորությունները ևս: Այսպես, Ակտի 101-րդ հոդվածի (b) մասի 1-ին ու 2-րդ կետերը (**Section 101 (b (1), (2)**) սահմանում են.

*«Կառավարության քարտուղարությունների (Departments, Հ.Ս.) և գործակալությունների՝ ազգային անվտանգությանն առնչվող քաղաքականությունն ու գործառույթներն առավել արդյունավետ համակարգելու նպատակով Նախագահի կողմից հանձնարարված այլ գործառույթներ կատարելուց բացի, Խորհուրդը, Նախագահի հանձնարարությամբ, իրականացնում է իր (**հետևյալ**, **Հ.Ս.**) պարտականությունները.*

*(1) Կապված մեր փաստացի և պոտենցիալ ռազմական հզորության հետ, ի շահ ազգային անվտանգության, գնահատել և արժևորել Միացյալ Նահանգների նպատակները, պարտավորությունները և ռիսկերը, ինչի կապակցությամբ (**Խորհրդի**, Հ.Ս.) նպատակն է Նախագահին առաջարկություններ անելը.*

(2) Քաղաքականության վերանայում, որը վերաբերում է ազգային անվտանգությանն առնչվող քարտուղարությունների և գործակալությունների ընդհանուր հարցերին, և այս կապակցությամբ առաջարկություններ ներկայացնել Նախագահին»[2]*:*

[1] https://www.dni.gov/index.php/ic-legal-reference-book/national-security-act-of-1947 [28/11/2024]

[2] https://www.dni.gov/index.php/ic-legal-reference-book/national-security-act-of-1947 [1/8/2025]

ԱՄՆ ԱԱԽ-ն Դաշնային Կառավարության առանցքային ինստիտուտ է, որը պատասխանատու է ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերում Նախագահին խորհրդատվություն տրամադրելու համար:

«Ճգնաժամային կառավարման դեպքում հատկապես կարևոր է անվտանգության միջոցառումների օպերատիվ իրականացումը, երբ գործադիր իշխանությունը տեղեկատվությունը, փորձը, պատկերացումներն ու գիտելիքները, որոնք առկա են կառավարության տարբեր մակարդակներում և գերատեսչություններում, պետք է կարող լինի գործածել»[1]: ԱՄՆ ԱԱԽ-ն, ի թիվս այլնի, ներկայանում է որպես, այսպես կոչված, ճգնաժամային կառավարման մարմին, որի առանցքային լիազորությունը Հանրապետության Նախագահի սահմանադրական գործառույթներն իրականացնելուն օժանդակելն ու օգնելն է:

Ուսումնասիրելով Ակտի դրույթները և վկայակոչված հատվածները՝ կարող ենք առանձնացնել Ազգային անվտանգության խորհրդի հետևյալ լիազորությունները:

Նախագահին խորհուրդներ տրամադրելը. ԱՄՆ ԱԱԽ-ն Հանրապետության Նախագահին տրամադրում է խորհրդատվություններ և ուղղորդում ազգային անվտանգության, արտաքին քաղաքականության ու պաշտպանության բնագավառներին առնչվող հարցերի լուծման պարագայում: Սա ենթադրում է միջազգային և ազգային անվտանգության տարբեր խնդիրների լուծման նպատակով Հանրապետության Նախագահի կողմից կայացվող, ենթադրյալ որոշումների մի քանի տարբերակների առաջարկում՝ ներկայացնելով համապատասխան սցենարների նկարագրությունները:

Ազգային անվտանգությանն առնչվող քարտուղարությունների և գործակալությունների աշխատանքների համակարգում. ԱՄՆ ԱԱԽ-ն կարևորագույն դեր է զբաղեցնում ազգային անվտանգությանն առնչվող քարտուղարությունների[2] և գործակալությունների գործունեության, աշխատանքային քաղաքականության մշակման, իրականացման և համակարգման աշխատանքներում: Այս կարևոր լիազորությունը թույլ է տալիս, որպեսզի Գործադիր իշխանությունը՝ Նախագահն իր վարչակարգով, ապահովի ազգային անվտանգությանն առնչվող խնդիրների միասնական և արդյունավետ գույքագրում, ապա՝ նաև լուծում:

Համաձայն Ակտի կանոնակարգումների՝ Հանրապետության Նախագահն օժտված է Ազգային անվտանգության խորհրդի կազմում հանձնաժողովներ ստեղծելու իրավասությամբ: Այսպես, Ակտի **Section 101, (h) մասի (1) կետով** Ազգային անվտանգության խորհրդի կազմում *Արտաքին հետախուզության հանձնաժողովի ձևավորման* բացառիկ իրավասությունը վերապահվել է

[1] **Anthony Wanis-St. John.** The National Security Council: Tool of Presidential crisis management. Journal of Public and International Affairs, vol. 9, no. 1 (1998).

[2] Ամերիկայի Միացյալ Նահանգներում որպես այդպիսին նախարարություններ գոյություն չունեն. առկա են քարտուղարություններ (անգլ.՝ **Departments**):

Նախագահին, իսկ **(2)-րդ կետով՝** հաստատում է վերջինիս կազմը: Արտաքին հետախուզության հանձնաժողովի լիազորությունները ներառում են.

- Միացյալ Նահանգների ազգային անվտանգության շահի, ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հետախուզական տեղեկատվության նույնականացում, համադրում և վերլուծություն.
- Հանձնաժողովի կողմից Ազգային անվտանգության խորհրդի կողմից նախանշված ազգային շահերի սպասարկումը, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման առաջնահերթությունների սահմանումը.
- Միացյալ Նահանգների կողմից իրականացվող հետախուզական գործողությունների իրականացման նպատակով անհրաժեշտ քաղաքականության մշակումը, հաստատումը, որը ներառում է անհրաժեշտ հետախուզական միջոցառումների նպատակների, խնդիրների և ժամկետների հաստատումը:

Section 101, (i) մասը նախատեսում է Անդրազգային մարտահրավերների հանձնաժողովի (անգլ.՝ **The Committee on Transnational Threats**) հիմնում:

Section 101A, (a) կետը՝ Ընդհանուր հետախուզության համայնքի խորհրդի (անգլ.՝ **Joint Intelligence Community Council**) հիմնում:

*«Ընդհանուր հետախուզության համայնքի խորհուրդն ազգային անվտանգության ապահովմանն ուղղված համագործակցային, միասնական, ազգային հետախուզական միջոցառումների մշակման և իրականացման գործում պետք է աջակցի Ազգային հետախուզության տնօրենին (**հետևյալ ճանապարհներով**, Հ.Ս.).*

(1) Պահանջների սահմանման, բյուջեների մշակման, ֆինանսական կառավարման և հետախուզական համայնքի գործունեության մշտադիտարկման ու գնահատման, ինչպես նաև այլ հարցերի առնչությամբ խորհրդատվություն է տրամադրում Տնօրենին, որոնց վերաբերյալ Տնօրենը կարող է խորհրդատվություն հայցել.

(2) Տնօրենի կողմից հաստատված կամ մշակված ծրագրերի, քաղաքականության և ուղեցույցների ժամանակին իրականացման ապահովում»[1]*:*

Հետախուզական հատուկ ծառայությունների աշխատանքների վերահսկողություն. ի թիվս այլնի, ԱՄՆ ԱԱԽ-ն վերահսկում և գնահատում է Գործադիր իշխանության այն մարմինների գործունեությունը, որոնք առնչվում են հետախուզական գործունեության հետ, համոզվելով, որ դրանք համապատասխանում են ազգային անվտանգության նպատակներին, Հանրապետության Նախագահին տրված խորհրդատվություններին, ինչպես նաև վերջիններս, հիմնվելով նորմատիվ բազայի վրա, իրականացվում են:

Ազգային անվտանգության ապահովումը ենթադրում է բարդ, ճգնաժամային հարցերի, խնդիրների և իրավիճակների հանգուցալուծում, ինչ

[1] https://www.dni.gov/index.php/ic-legal-reference-book/national-security-act-of-1947 [1/8/2025]

նպատակով էլ, ի թիվս այլնի, հիմնադրվել էր Ազգային անվտանգության խորհուրդը: Սույն համատեքստում կարող ենք ենթադրել, որ, ընդհանուր հաշվով, ԱՄՆ ԱԱԽ-ն պատասխանատու է օժանդակել Հանրապետության Նախագահին՝ կառավարելու առաջացած ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ճգնաժամերը, արտակարգ իրավիճակները, ինչպես նաև վերջիններիս հավուր պատշաճի արձագանքելը: Ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների ներքո անհրաժեշտ է հասկանալ բնական աղետներ, ահաբեկչական հարձակումներ և միջազգային հակամարտություններ:

Ազգային անվտանգության ապահովմանն առնչվող քաղաքականության մշակումը. ԱՄՆ ԱԱԽ-ն, ի թիվս այլնի, պատասխանատու է ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության բնագավառների ռազմավարությունների մշակման համար: Սույն նպատակին հասնելու համար ԱՄՆ ԱԱԽ-ն դյուրացնում է հաղորդակցությունը և համակարգումը տարբեր քարտուղարությունների, գործակալությունների և իշխանության բոլոր ճյուղերի միջև՝ ապահովելով արդյունավետ և անհրաժեշտ համագործակցությունը:

Եզրակացություն

Ըստ այդմ, Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային անվտանգության խորհրդի կազմի, կառուցվածքի ու լիազորությունների մասով կարող ենք կատարել հետևյալ արձանագրումները.

1. Նպատակն ու մանդատը: Ապահովել ազգային անվտանգության և պետական շահերի՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին, պաշտպանության ռազմավարության մշակումը: Ազգային անվտանգության խորհուրդը ազգային անվտանգության բնագավառում քաղաքականության մշակման և որոշումների կայացման համակարգման պետական բարձրագույն ինստիտուտն է:

2. Կազմը: Միացյալ Նահանգներում Ազգային անվտանգության խորհուրդն ունի լայն կազմ: Ազգային անվտանգության խորհուրդը ներառում է Գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց, որոնք համակարգում են արտաքին հարաբերությունները, ներքին և արտաքին անվտանգության, ինչպես նաև ֆինանսական և էներգետիկ բնագավառները: Ազգային անվտանգության խորհրդի կազմում ներառված են Նախագահը, Փոխնախագահը և Նախագահի վարչակարգի այլ առանցքային անդամները, ինչպես նաև առանցքային տեղ է զբաղեցնում Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ադմինիստրատորը:

3. Համակարգման բնագավառը: Ազգային անվտանգության խորհուրդը կարևորագույն դերակատարում ունի արտաքին հարաբերությունների և անվտանգության բնագավառներում գործունեություն ծավալող տարբեր

քարտուղարությունների (նախարարությունների), ինստիտուտների և գործակալությունների աշխատանքների համակարգման գործընթացում: Ազգային անվտանգության խորհուրդը նպաստում է ազգային անվտանգության խնդիրների լուծման համակարգված և կոնսենսուսային որոշումների կայացմանը:

4. Գործառույթներն ու լիազորությունները: Ազգային անվտանգության խորհուրդն օժտված է ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով ազգային (ինչպես ներպետական, այնպես էլ գլոբալ) ռազմավարությունների մշակման լայն լիազորություններով: Վերջինիս առանցքային գործառույթը Հանրապետության Նախագահին և Վարչակարգի այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց անվտանգության և արտաքին հարաբերությունների բնագավառների համակարգման տիրույթում առկա խնդիրների ձևակերպման և դրանց լուծման քաղաքականության մշակման վերաբերյալ խորհուրդներ տալն է: Ազգային անվտանգության խորհուրդը հաճախ կայացնում է Հանրապետության վերաբերյալ առանցքային որոշումներ՝ ազգային անվտանգության և արտաքին հարաբերությունների խնդիրների լուծման վերաբերյալ: ԱՄՆ Նախագահը, ռազմավարական որոշումներ կայացնելիս, կարծիքների, դատողությունների և առաջարկությունների համար գրեթե միշտ դիմում է Ազգային անվտանգության խորհրդին: Որոշումներից զատ Նախագահը, ի թիվս այլնի, կարող է դիմել այնպիսի հարցերի պատասխաններ ստանալու համար, որոնք ներառում են ռազմական դոկտրինի և այլ պետությունների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ տարաբնույթ ռազմավարությունների և քաղաքականությունների մշակումը: Հատկանշական է, որ Ազգային անվտանգության խորհրդում որոշումների կայացման գործընթացում Հանրապետության Նախագահն օժտված է լայն ինքնուրույնությամբ:

5. Ստեղծման պատմությունը: Մինչև դասական իմաստով Ազգային անվտանգության խորհուրդ հիմնելը՝ Միացյալ Նահանգներում 1911-1916 թվականներին գործել է հատուկ ռազմական կաբինետ՝ Ազգային պաշտպանության խորհուրդ: Այնուհետև, 1916 թվականի Ազգային պաշտպանության ակտով ստեղծվեց համանուն մի կառույց, որը գլխավորում էր Պատերազմի քարտուղարը: 1940 թվականին Նախագահ Ռուզվելտի կողմից ստեղծվում է Ազգային պաշտպանության խորհրդատվական խորհուրդը, որն էլ գործում է մինչ 1947 թվականը: Միացյալ Նահանգներում Ազգային անվտանգության խորհուրդը ստեղծվեց 1947 թվականին՝ «Ազգային անվտանգության» ակտով:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Основы национальной безопасности: Учеб. пособие для студ. высш. проф. учеб. заведений / **[Л.А. Михайлов**]. - М.: Издательский центр «Академия», 2008.
2. **Walter Lippmann.** US Foreign Policy: Shield of the Republic. An Atlantic monthly press book. Boston: Little, Brown and Company, 1943.
3. **Paul Y. Hammond.** American Political Science Review. Volume 54, Issue 4, December 1960.
4. **Anthony Wanis-St. John**. The National Security Council: Tool of Presidential crisis management. Journal of Public and International Affairs, vol. 9, no. 1 (1998).
5. National Security Act of 1947.

Էլեկտրոնային ռեսուրսներ

1. https://govtrackus.s3.amazonaws.com/legislink/pdf/stat/61/STATUTE-61-Pg495.pdf [01.08.2025 թ.]
2. https://crsreports.congress.gov/product/pdf/R/R44828 [01.08.2025 թ.]
3. https://www.defense.gov [01.08.2025 թ.]
4. https://www.whitehouse.gov/nsc/ [01.08.2025 թ.]
5. https://history.state.gov/milestones/1945-1952/marshall-plan [01.08.2025 թ.]
6. https://history.state.gov/milestones/1945-1952/truman-doctrine#:~:text=With%20the%20Truman%20Doctrine%2C%20President,external%20or%20internal%20authoritarian%20forces [01.08.2025 թ.]
7. https://crsreports.congress.gov/product/pdf/R/R44828 [01.08.2025 թ.]
8. https://www.usaid.gov/organization/office-administrator [01.08.2025 թ.]
9. https://www.jcs.mil [01.08.2025 թ.]
10. https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/02/04/memorandum-renewing-the-national-security-council-system/
11. https://www.senate.gov/about/origins-foundations/senate-and-constitution/constitution.htm#a1_sec1 [01.08.2025 թ.]

ИСТОРИЧЕСКАЯ ПРЕДПОСЫЛКА СОЗДАНИЯ СОВЕТА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ И РАЗВИТИЯ ИНСТИТУТА В СОЕДИНЕННЫХ ШТАТАХ АМЕРИКИ

Аннотация

Целью статьи является изучение, обсуждение и представление исторической эволюции создания Совета национальной безопасности в системе государственного управления США, правовых и политических целей принятия “Закона о национальной безопасности” и его последствий. В статье используются методы сравнения, анализа и синтеза. Объектом исследования является создание Совета национальной безопасности США и его место и роль в системе государственного управления.

Ключевые слова: национальная безопасность, стратегия национальной безопасности, Совет национальной безопасности, Соединенные Штаты, Теодор Рузвельт, Гарри Труман.

THE HISTORICAL BACKGROUND OF THE ESTABLISHMENT OF THE NATIONAL SECURITY COUNCIL AND THE DEVELOPMENT OF THE INSTITUTE IN THE UNITED STATES OF AMERICA

Annotation

The purpose of this article is to study, discuss, and present the historical evolution of the establishment of the National Security Council in the governance system of the United States, the legal and political objectives of the adoption of the “National Security Act,” and its consequences. The article uses comparative, analytical, and synthesis methods of research. The subject of the study is the establishment of the United States National Security Council and its place and role in the state governance system.

Keywords: National Security, National Security Strategy, National Security Council, United States, Theodore Roosevelt, Harry Truman.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.01.2025 թ., տրվել է գրախոսության 12.01.2025 թ., ընդունվել է տպագրության 01.02.2025 թ.: